

ՍԵՎԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՂԻՉԵ ՉԱՐԵՆՅ, ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅ. ՄՏԵՐՍՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի ազնվագույն զավակներից նրկուսն ապրեցին բարդ ու հակասական ժամանակներում: Տեսան պատերազմ, ջարդ ու սպանդ, եղեռն: Անցան բազում դժվարությունների միջով: Մասնակցեցին նոր՝ Խորհրդային Հայաստանի կառուցմանը՝ դառնալով հենց այդ նոր՝ ստալինյան ռեժիմի զոհերը:

Եղիշե Աբգարի Սողոմոնյանը (Ե.Չարենց) ծնվել է Կարսում, 1897թ. մարտի 13-ին: Երկու տարի և երեք ամիս անց, 1899թ. հունիսի 13-ին Գորիսում ծնվում է Ալեքսանդր Ստեփանի Թեոսյանը (Ա.Բակունց): Տարբեր էին նրանց կյանքի ուղիները: Տարբեր էին նաև նրանց ստեղծագործական ճամփաները: Սակայն ճակատագիրը սահմանել էր ոչ միայն նրանց հանդիպումը, մտերմությունն ու բարեկամությունը, այլև գրեթե միաժամանակյա նահատակությունը:

1920-ական թվականների առաջին կեսին Եղիշե Չարենցն արդեն անվանի բանաստեղծ էր՝ «Դանթեական առասպել», «Ամբոխները խելագարված», «Սոմա» պոեմների հեղինակ: Նա ակտիվորեն մասնակցում էր հայ գրական-հասարակական կյանքին, ստեղծում էր խմբակներ, գրում էր դեկլարացիաներ, մի խոսքով՝ ստեղծագործական և հրապարակախոսական բուռն տարերքի մեջ էր:

Նույն ժամանակահատվածում Ա.Բակունցը փարկովում ուսանելուց հետո վերադառնում է հայրենի քաղաք՝ Գորիս, և զբաղվում... գյուղատնտեսությամբ: Այո, մինչ «Մթնածորի» լույս աշխարհ գալը՝ 1927թ., Բակունցը ավելի գյուղատնտես էր, քան պրոֆեսիոնալ գրող: Նա գյուղագնտեսությանը վերաբերող բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ էր. գրականությունն ավելի նախասիրություն էր. գրում էր ակնարկներ և փոքրիկ պատմվածքներ՝ դրանք տպագրելով երևանյան և թիֆլիսյան պարբերականներում: Սակայն Ալսեյ ստորագրությամբ հանդես եկող ակնարկագիրն անմիջապես նկատվում է հայ գրողների և գրականագետների կողմից, այդ թվում և Ե. Չարենցի կողմից:

Ժամանակակիցներից Վ.Ալազանը հիշում է, որ Ակսելով հիացած էին շատերը, Չարենցը՝ ևայնպես:

«Մի անգամ ես հարցրի նրան.

- Ո՞վ է այս Ակսելը:

Չարենցը բացասաբար շարժեց գլուխը և տասց.

- Ասում են, որ զանգեզուրցի մի ուսուցիչ է...» (№11, էջ 141: Այսուհետ մեջբերման էջը կնշվի տեղում՝ գրականության ցանկի համարակալմամբ):

1926թ. Բակունցը որոշում է մեկընդմիջտ փոխադրվել և հաստատվել մայրաքաղաքում: Նույն թվականին էլ Չարենցը և Բակունցը ծանոթանում են: Այս մասին իր գրառումներից մեկում նշել է հենց Չարենցը (Տես, №7, էջ 474): Ծանոթությունը հետզհետե վերածվում է ընկերության և շարունակվում է 11 տարի, մինչ 1937թ.:

1925թ. Չարենցը արտասահմանյան շրջագայություններից վերադառնում է Երևան և ստեղծում «Նոյեմբեր» միությունը՝ ի հակակշիռ Ա. Վշտունու, Ն.Զարյանի «Պրոլետերական գրողների ասոցիացիայի»: «Նոյեմբերի» կազմում էին Գ.Մահարին, Մ.Արմենը, Գ.Մարյանը, 1926թ. նրանց շարքերին հարեց Ա. Բակունցը: 1927թ. լույս տեսավ «Մթնածորը», և Չարենցը չհասպահեղեց բանաստեղծական արձագանք տալ դրան.

Մթնածորում

Մուժն է ծորում

Օճորքից,

Նա չի արդյոք

Տալիս մորմոք

Քո երգին

Այստեղ դեռ կան

Մոայլ խութեր ու հերկեր

Բայց այնտեղից, որ դուրս եկար,

Պայծառ երգեր դու կերգես:

Եվրոպական մայրաքաղաքներն ու վեհաշուք մշակույթը նպաստել էին Չարենցի հայացքների փոփոխմանը. «դեկլարացիաներն» այնևս անցյալում էին: Պատահական չէ ընկերական շրջանում Չարենցի արված այս արտահայտությունը. «Ակսելի մի պատմվածքը հազար դեկլարացիայի հետ չեմ փոխի»(№1, էջ 166): Բայց այն եռանդը, որով նա գրականությունից գառ տրվում էր հասարակական աշխատանքին,

շարունակում էր մնալ նույնը: Չարենցը միշտ գրական վեճերի, ասուլիսների, հրապարակային քննարկումների կենտրոնում էր, մինչդեռ Բակունցը, թեև ճանաչված գրող էր արդեն, բայց մանավանդ սկզբնական շրջանում հեռու էր մնում այդ եռուզեռից: Սա, իհարկե, խոչընդոտ չէր նրանց մտերմությանը: Վահան Բակունցը՝ գրողի եղբայրը, հիշում է. «Ակսելի ու Չարենցի միջև մի անխախտելի կապ էր ստեղծվել. շուտ-շուտ էին նրանք հանդիպում իրար, ավելի երկար խոսում, վիճում, նույնիսկ իրարից մի փոքր նեղանում՝ հաջորդ օրը նոր թափով իրար ավելի հարգելու համար... Իրարից բաժանվում էին դժվարությամբ» (№11, էջ 166): Իրոք, վեճերն անսպակաս էին նրանց գրույցներում և ծավալվում էին տարատեսակ ոլորտների շուրջ: Ահա մի դրվագ, որ հիշում է ժամանակի գրողներից Խորեն Աճեմյանը .

«Ջրոսնում ենք Արովյանով, ապա զբոսայգով անցնում Նալբանդյան փողոց. զրույցը՝ շատ խաղաղ և ակադեմիկ ոգով, ուղեկցում է երթի ընթացքին: Խոսում է Չարենցը և հիշում լատինական այն առածը, թե՛ «Habent sua fata libelli», և ապա թարգմանում է՝ դառնալով Բակունցին.

- Այսինքն՝ զրքերն ունեն իրենց ճակատագիրը:

- Վարող էիր չթարգմանել, - ասում է Բակունցը և ապա ավելացնում: - Ամեն մի գիրք ունի իր ճակատագիրը - ահա այդ աֆորիզմը:

- Նախ՝ քանի որ հայերեն ենք խոսում, ապա ոչ թե աֆորիզմ, այլ ափորիզմ...

- Գուցե կասես՝ «աթորիզմ», - ասում է Բակունցը:

Այսպես մի բառից, անգամ մի տառից կարող էին լրջորեն վիճել: Նույնիսկ մեկ-մեկ էլ հայերենից ռուսերենի էին անցնում:

- Ախր չես թողնում, որ մարդ իր ասածը ասի և մեջ ես ընկնում ոնց որ Քապեն, - ասում է Չարենցը:

- Ну, дуй, дуй, сколько угодно, и так все время ты говоришь. - հեզնում է Բակունցը» (№2, էջ 109):

Ընդհանրապես Չարենցը շատ տաքարյուն էր, դյուրագրգիռ, արագ ջնկվող: Խնջույքներն ու քեֆերը, խմիչքն ու զուռնա-քիոլը նրա կենցաղի անբաժան մասն էին: Իսկ Բակունցը, հակառակը, խոսքի մեջ սեղմ էր, արտաքինից շատ հանգիստ, պահվածքով՝ խստաբարո, թեև երբեմն Չարենցի «ջրերն» էր ընկնում:

«Ակսելը մեկ-մեկ ուշանում էր, - հիշում է Վ.Բակունցը, - Վարվառան անհանգստանում էր.

- Անսպանան գնացել է Եղիշէի տուն ու մի բաժակ խմել»,- եզրակացնում էր Բակունցի կէտը՝ Վարվառա Չիվիջյանը» (№11, էջ166):

Ակսելի սակավախոսությունը հիշատակում է նաև Ռ.Զարյանը. «Բակունցը հագարից մեկ էր միջամտում այդ վեճ-գրուցներին, իսկ միջամտելիս էլ մեծ մասամբ նրա ասածը գրչակից ընկերներն ընդունում էին իբրև վերջնական խոսք»(№3, էջ57):

Բնավորությամբ միանգամայն տարբեր լինելով՝ մեկը մյուսին լրացնում էին: Ստեղծագործական պրոցեսում «վերջակետ» չէին դնում, մինչև իրար հետ չխորհրդակցեին, կարծիքներ չփոխանակեին:

«Չեմ կարողանում առանց քեզ յուր գնալ, - ամեն անգամ Ակսելի մոտ գալուց ասում էր Զարեհը, - իմ մոտ օրենք ու պահանջ է դարձել այն, որ մինչև իմ մտահղացումների մասին չեմ գրուցում քեզ հետ, չեմ կարողանում կողմնորոշվել» (№11, էջ167):

Այս առթիվ Գ.Մահարին էլ հավելում է. «... Նրանք մի մեծ ներդաշնակություն էին և իրար հասկանում էին կես խոսքից: Ինչպես Զարեհն էր ընդունում Բակունցի հեղինակությունը, այնպես էլ Բակունցը՝ Զարեհի:

- Գնանք Եղիշի մոտ, տեսնենք ի՞նչ կասի այս մասին,- ասում էր Բակունցը, երբ մի հարց թվում էր դժվար լուծելի:

- Մեր Ակսելն էլ ժամանակ գտավ գյուղ գնալու: Տեսնես ի՞նչ է նրա կարծիքը» (№11, էջ 101):

Զարեհի տարերքներից մեկն էլ երաժշտությունն էր: Շատ էր սիրում լսել հայկական ժողովրդական երգեր, պաշտում էր Կոմիտասի հանճարը: Բայց նա, ցավոք, երգելու շնորհք չուներ՝ ի տարբերություն ընկերոջը՝ Բակունցի, որը, ժամանակակիցների վկայությամբ, անգուրգական էր երգում, հատկապես՝ Կոմիտաս: «Ակսելը ձեմարանից հիշում էր Կոմիտասի երգերը, երբեմն նեղ շրջանակում Կոմիտաս էր երգում չափ տալով, չնայած որ միակ երգողն ինքն էր: Զարեհնը շատ էր սիրում այդ երգերը. «Մի Կոմիտաս երգիր, Ակսել»:

Երբեմն էլ, երբ նեղսրտում էր ու ձանձրանում, գլխարկը քաշում էր աչքերի վրա և երեխայի պես խնայում.

- Գնանք Ակսելի մոտ, Կոմիտաս լսենք» (№1, էջ 182):

Բնականաբար, արձակագիր Բակունցը երգելուց ավելի պատմելու ձիրք ուներ. այս դեպքում էլ Զարեհը մեծագույն հաճությով էր ունկնդրում ընկերոջը:

«Այս րուպեներին պետք էր նայել Չարենցի դեմքին, - ասում է Մ.Արմենը, - ինչպե՞ս էր լուռ նա Ալեքսանին... Ինքը ոչ պակաս հոգու կախարդ, կլանվում էր նրա մեղմ ու երազկոտ ձայնով, պարզ պատմությանմբ, որն Ակսելն անում էր առանց սեթևեթության, իսկական հուզմունքով, բայց, միաժամանակ, հանդարտասահ: Նա այդպես կարող էր խոսել ամեն ինչի մասին՝ և հայոց պատմության, և մարդկության ապագայի, և հայկական բնաշխարհի, և հասարակ մարդկանց... և երբ նա ավարտում էր, մենք բոլորս դեռ որոշ ժամանակ նստած էինք մնում նրա պատմության տպավորության տակ: Ապա Չարենցը զլուխն էր ցնցում, կարծես թոթափելու համար իրենից նրա կախարդանքը և ժպտում էր քթի տակ՝ զարմանալով Ակսելի պատմելու ընդունակության վրա» (№11, էջ 155): Ընկերական զգացումունքը միմյանց նկատմամբ օր օրի, ամսեամիս աճում էր ու խորանում, հասնում է այնպիսի վիճակի, երբ միմյանց ստեղծագործություններ էին նվիրում, գրականության լեզվով խոսում իրար հետ: Մեկը մյուսի տաղանդը խորապես գիտակցում, ճանաչում ու գնահատում էր: Առաջին օրինակը տվեց Չարենցը՝ 1929թ.-ին գրելով «Թուրլոյ Ա.Բակունցին, գրված Լենինգրադից» հիասքանչ նամակ-բանաստեղծությունը: Չարենցը հաճախ է ասում էր. «Ակսելը մեծ երևույթ է»:

Բակունցն էլ, երբ խոսք էր գնում ժամանակի հայ բանաստեղծներից, սպառիչ հարց-պատասխան էր տալիս. «Չարենցից հետո էլ ի՞նչ բանաստեղծություն»: Երկուսն էլ ջանասիրաբար աշխատում էին ժամանակի երիտասարդ գրողների հետ, խորհուրդներ տալիս, փորձում ճիշտ ուղու վրա կանգնեցնել: Բազմաթիվ սկսնակ գրողներ ամեն օր այցելում էին նրանց բնակարանները և աշխատավայրերը, իսկողում, որ կարդան իրենց ձեռագրերը, կարծիք հայտնեն: Նրանք էլ չէին զլանում կատարել հաճախ ձանձրալի ու հոգնեցնող այդ աշխատանքը: Պատահում էր, երիտասարդին ոգևորելով, մամուլում տպագրում էին նրա ոչ այնքան արժեքավոր գործը:

1930թ. Չարենցը «Էպիկական լուսաբացի» մի օրինակ է նվիրում Բակունցին՝ հետևյալ մակագրությամբ. «Միրելի Ակսելին, միակ բարեկամիս»: Ահա այսպիսի ջերմության աստիճանի էր հասել նրանց ընկերությունը: Բակունցը հաճախ ստանձնում էր Չարենցի «դայակի» դերը: Չափազանց դյուրագրգիռ լինելով՝ Ակսելի ներկայությամբ Չարենցը փորձում էր իրեն հնարավորինս հավաք պահել, անտեղի չտաքանալ: Ռ.Չարյանը հիշում է. «Չարենցը ծայրահեղորեն տրա-

մադրության տեր մարդ, բորբոքուն ու անհավասարակշիւ, որ եւճախ հաշիվ չէր տալիս իր հետ խոսողը կին է, թե տղամարդ. բալորովին այլ էր Բակունցի ներկայութեամբ, քաշվում էր, գազվում...» (№3, էջ 57):

Վ.Անանյանը ինքուրի մի տեսարան է հիշում, ուր երևում է, թե Բակունցը սրտացավ ու մտահոգ ինչպիսի վերաբերմունք ուներ Չարենցի նկատմամբ. «... Այդ երեկո էս նկատեցի, որ հենց քեֆի սկզբից եւ ուշադիր հետևում է Չարենցին, աչքունքով ինձ հասկացնում է, որ Չարենցի գավաթը կիսատ լցնեն, որովհետև մեր սիրելի պոետը թուլակազմ էր և շատ շուտ ազդվում էր ոգելից խմիչքներից: Ջգալով, որ Չարենցը «տաքանում» է, Ակսելն ինձ գաղտնի պատվիրեց սեղանի վրայից աննկատելիորեն հավաքել և թաքցնել կոնյակի շէրը... ու մինչ քեֆը շարունակվում էր, եւ, մեզմ գրուցելով, ընկերոջը տարավ հյուրանոց և պառկեցրեց, էս զգացի, որ եւս դողում է Չարենցի առողջության համար» (№11, էջ 79):

Ընթերցենք Չարենցի ընծայագրերից մեկը եւ՝ թվագրված 1932թ., հուլիսի 7-ով. «Սիրելի Ակսելին, որպէս նշան գրական և անձնական անխախտ սիրո և բարեկամութեան» (№7, էջ 484):

Հաջորդ՝ 1933 թվականը «անխախտ սիրո և բարեկամութեան» փաստացի այացույցների մի ամբողջ ձգվող սարի է:

Լույս տեսավ «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուն, ուր, լիովին վերամշակված, տեղ էր գտել նաև «Ալպիական մանուշակը»՝ Բակունցի փայլուն մարգարիտներից մեկը: Այն նվիրագրված էր Չարենցի առաջին կնոջը՝ Արփենիկին: Բայց ինչո՞ւ հենց նրան և ոչ թե Չարենցին: Բոլորին քաջ հայտնի է, թե որքա՞ն էր բանաստեղծը սիրում իր կնոջը և որպիսի՞ ցավով էր ապրում նրա կորուստը: «Ալպիական մանուշակը» առաջին անգամ տպագրվել էր 1927 թ. «Խորհրդային Հայաստան» օրաթերթի հունվարի 1-4 համարներում: Այդ օրերին, ավելի ստույգ՝ հունվարի 2-ին վախճանվում է Արփենիկ Չարենցը: Եվ հիմա Բակունցը հարկ է համարում «Ալպիական մանուշակը» ձուլել Արփենիկին:

1933 թվականը ստեղծագործական տեսակետից երկուսի համար էլ չափազանց արգասաբեր էր. Բակունցը, ինչպէս սուսցիւնք, գրում է «Սև ցելերը», իսկ Չարենցը «Գիրք ճանապարհին», ուր կայծ կարևորություն է ստանում պատմութեան թեման:

Հայ ժողովրդի պատմական ընթացքը վերլուծելիս՝ անհնար էր չլիստել Խ.Աբովյանի մասին: Աբովյանի «հարցը», հատկապէս նրա անմեկնելի վախճանը անչափի հետաքրքրել է Բակունցին: Այս խնդրի

շուրջ նա անգամ պատմագիտական մի աշխատություն է գրել («Ն.Արուվյանի «անհայտ բացակայումը»): Բայց, իհարկե, շատ ավելի արժեքավոր և էական է նրա «Մաչատուր Արուվյան» վեպը, որը, ցավոք, չհասցրեց ավարտել: Չարենցը նույնպես անդրադառնում է Արուվյանին «Գիրք ճանապարհի»-ում: «Դեպի լյառը Մասիս» պոեմը նվիրված է ընկերոջը. «Ա.Բակունցին, պայծառ բարեկամիս»: Անմահ ստեղծագործություններ կերտելու հետ մեկտեղ՝ երկու գրողներն էլ ժամանակ են գտնում բանասիրական մանրակրկիտ աշխատանքի համար: Նրանք միասին կազմում են «Հայ գրականության քրեստոմատիան», որը նախատեսված էր 8-րդ դասարանիների համար:

1933թ. Չարենցի և Բակունցի եղբայրական ջերմության գագաթնակետը կարելի է համարել... Սակայն, հայտնի է, որ վերելքին հաճախ վայրէջքն է հաջորդում: Այս տեսակետից նրանց հարաբերություններն էլ բացառություն չէին: 1933թ. վերջերից մինչև 1936թ. «ջերմաստիճանի իջեցում» է նկատվում: «Անխախտ բարեկամությունը» կարծես լախտովում է: Փորձենք ճշմարտացի ներկայացնել այդ ժամանակահատվածը, որոնք խզման պատճառները՝ հիմնվելով ստույգ փաստերի վրա միայն: Բայց նախ՝ անդրադառնանք անվանի գրականագետ Ռ. Ջարյանի «Մայրամուտից առաջ» գրքին, որտեղ «Չարենցի և Բակունցի գծությունը» ենթավերնագիրը կրող բաժնում հեղինակը՝ դեպքերի ժամանակակիցը, պատմում է կատարված իրադարձությունների մասին: Մեր խորին համոզմամբ նա փոքր-ինչ խտացրել է գույները՝ տեղ-տեղ չափազանցնելով: Նկատենք նաև, որ բացի Ռ. Ջարյանից, Չարենցի և Բակունցի հուշագիրներից ուրիշ ոչ ոք չի խոսում նրանց խոռվության մասին: Սա, անշուշտ, թույլ չի տալիս պնդելու, թե խոռվություն չկար, ընդհակառակը, մենք համոզված ենք, որ վերոնիշյալ ժամանակահատվածում նրանց հարաբերությունները սառել են:

Ուշադրություն դարձնենք նա մեկ իրողության վրա. 1932թ. սպրիլի 23-ին ՀԿԿ Կենտկոմի հատուկ որոշմամբ վերանում են բոլոր գրական խմբակները, կազմակերպությունները, ասոցիացիաները: Փոխարենը գրողները ընգրկվում են մեկ ընդհանուր միության մեջ: Հայաստանում գրողների միությունը հիմնվելով՝ անմիջապես էլ բաժանվում է երկու մասի, պայմանակետորեն ասած՝ «աջերի» և «ձախերի», որոնցից առաջինի պարագլուխներն էին Չարենցը և Բակունցը, իսկ «ձախերի» ղեկավարներն էին Ն.Ջարյանը, Ա.Վշտունին և այլք:

Բայց վերադառնանք ժամանակագրությանը:

Ինչպես արդեն ասացինք, «Գիրք ճանապարհին» գրվում է 1933թ., գրվում է, բայց չի տպագրվում: Աշնանը գիրքն արդեն լիովին պատրաստ էր, սակայն պետական մարմիններն անընդհատ հետաձգում են նրա տպագրությունը: Ի վերջո գիրքը լույս է տեսնում միայն 1934թ., այն էլ մի շարք փոփոխություններով: Այս ամենից հետո էլ գիրքն արժանանում է խիստ քննադատության, բազմաթիվ մանր ու մեծ համբակներ, առիթը չկորցնելով, Չարենցին մեղադրում են նացիոնալիզմի ու նիհիլիզմի մեջ, այս ու այն կողմից անյապար հարձակումներ են գործում: Մոռացության է մատնվում Չարենցի 20-ամյա գրական հոբելյանը, Պետիրատում նրան աշխատանքից ազատում են: Փորձեր պատկերացնել առանց այն էլ անհավասարակշիռ Չարենցի հոգեկան վիճակն այդ օրերին: Նա ծանր ապրումներ ուներ, հասարակության մեջ չէր երևում, տանից համարյա դուրս չէր գալիս: Եվ իշխանություններից գատ, ահավոր դժգոհ էր իր գրչակից ու գաղափարակից ընկերներից, առաջին հերթին՝ Բակունցից, Մահարուց, Արմենից, Նորենցից, քանզի նրանք շատ պասիվ էին և իրեն պատշաճ կերպով չէին պաշտպանում հակառակորդ թևի հարձակումներից: Բուականաբար, Չարենցը վիրավորված էր նրանց վարքագծից:

1934թ. Մոսկվայում տեղի էր ունենում Խորհրդային գրողների համամիութենական համագումարը: Այս օրերին տված հարցազրույցներից մեկում Բակունցը Չարենցին համարում է ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Խորհրդային Միության խոշորագույն բանաստեղծը: Այս փաստն իսկ վկայում է, թե Բակունցը Չարենցի ընկերներից ամենաանմեղն ու խիզախն է եղել: Նույն 1934թ., արդեն Հայաստանում, հունիս ամսին անցկացվում են լեզվի հարցերին նվիրված ասուլիսներ: Միջանկյալ նկատենք, որ իր հուշերում այս մասին պատմում է Ռ.Ջարյանը: Այլոց շարքում զեկուցում է կարդում նաև Բակունցը և խոսելով Ն.Ջարյանի գրական լեզվի մասին՝ այն որակում է «փնթի», «հասարակ», «գավառաբարբառներով» լի: Այլ խոսքով՝ Բակունցը չի հապաղում հակահարված հասցնել «ձախերի» առաջնորդին:

Մինչև այս պահը, կարելի է ասել, որ Չարենցը կոնկրետ Բակունցից վիրավորվելու կամ դժգոհելու առիթ պիտի չունենար: Համենայն դեպս, արտաքինից այդպես է թվում: Հունիսի 28-ին Չարենցը զեկուցում է կարդում «Մեր գրականության լեզվի զարգացման տենդենցները և Դ.Դեմիրճյանի լեզուն» խորագրով: Զեկուցումը տեղ է մոտ երեք ու կես ժամ: Հասկանալի է, թե դրա մակարմասն քննարկումը

մեզ ուր կհասցնի: Փորձենք երկու բառով ներկայացնել զեկուցման ընդհանուր բովանդակությունը: Չարենցը, մերժելով թումանյանական լեզուն, առաջնությունը տալիս է Տերյանի «գրական բարձր լեզվին» և գտնում է, որ ներկայումս այս տեսակետից «լավագույն նմուշները» տալիս է Դ.Դեմիրճյանը: Ոչ մի խոսք Ա.Բակունցի մասին...

Քիչ առաջ նկատեցինք, որ արտաբնուստ թվում է, թե Չարենցը վիրավորվելու առիթ չպետք է ունենար: Բայց դժվար է պարզել, թե ի՞նչ էր կատարվում նրանց երկուսի «ներքին խոհանոցում»: Նույն կերպ դժվար է ասել՝ արդյո՞ք Չարենցն իր զեկուցման մեջ միտումնավոր է մոռացության մատնում Բակունցին, թե իր գրական հայացքներից ելնելով է Դեմիրճյանի լեզուն համարում ամենաօրինակելին: Բնչևէ, փաստն այն է, որ Բակունցը մոտ մեկ ամիս անց, օգոստոսի 6-ին, Հայաստանի գրողների առաջին համագումարում ելույթ է ունենում՝ հակադրվելով Չարենցի այն թեզին, համաձայն որի թումանյանական լեզուն մերժելի է:

Անդրադասնաևք նաև Բակունցի քիչ ավելի վաղ տեղի ունեցած մեկ այլ ելույթին, որի մասին իր հուշերում պատմում է Ռ.Ջարյանը. «1934-ի հուլիսի 21-ին, շատերի համար անսպասելի, Ա.Բակունցը գրողների տանը հանդես եկավ մի ընդարձակ, մոտ երկու ժամ տևող, զեկուցումով՝ «Տեղական նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ»:

Քննադատությունը սկսեց իրենից՝ վերլուծելով «Միրանի փող» պատմվածքը...» (№4, էջ 381-382): Այնուհետև, ինչպես վկայում է հուշագիրը, Բակունցը քննադատում է Թոթովենցին, Մահարուն, Չարենցին, այլ կերպ ասած՝ ցուցանում է իրենց թևի սխալները: Ցավոք, Բակունցի երկերի ակադեմիական հրատարակությունում պահպանվել է զեկուցման մի փոքր հատվածը միայն: Սակայն, մեր կարծիքով, Ռ.Ջարյանը շատ ճիշտ է ըմբռնել Բակունցի արածի իմաստը: Այս առթիվ նա գրում է. «Ըստ երևույթին Բակունցի քայլը շատերի համար էր անակնկալ: Նրանք (այսինքն՝ «ձախերը», Ս.Ղ.) հանկարծակիի եկան: Եթե կարելի է ասել հակառակորդներից նախաձեռնությունը խլված էր: Միտք չունեի ելույթ ունենալ և ասել նույնը, երբ դա բավական հիմնավոր և բավական խստությամբ արել էր անվերջ քննադատվող Բակունցը: Ուրեմն, մնում էր, որ նրանք ևս ինքնաքննադատական ելույթներ ունենային, որը ցանկալի չէր: Նախրուն և մյուսներին երևի թվում էր, որ իրենց լուրջունն աննկատ կանցնի: Բայց այդպես չեղավ:

Գրական մամուլը, հրապարակելով մանրամասն հաղորդում, անհրաժեշտ համարեց արձանագրել և պախարակել ընկերների լուրջությունը» (№4, էջ 385): Ինչպես տեսնում ենք, սա դիվանագիտական, մտածված արարք էր: Եվ թվում է՝ Չարենցը պիտի իր ընկերոջից չվիրավորվեր:

Սակայն վերադառնանք օգոստոսի 6-ի ելույթին: Ինչպես նկատեցինք, Բակունցը հակադրվում է Չարենցին՝ գտնելով, որ գրականությունը պետք է զարգանա «մաքուր», «կենտրոնաձիգ» լեզվով, իսկ դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել Թումանյանի լեզուն: «...Թումանյանը դառնում է այդ լեզվի նախահայրը, որովհետև Թումանյանի փորձն այս կուսակցությանը ավելի շատ տվյալներ ունի օգտակար լինելու, քան Տեղյանի լեզվաշինարարության փորձը», - ասում է զեկուցողը (№9, էջ 572): Ինչպես և բացատրել Բակունցի ելույթի շարժառիթը: Արդյոք սա՞ մաքուր գրական վեճ էր, թե՞ անձնական բախում: Չենք ցանկանում գուշակություններ անել: Միայն փաստենք, որ նույն ելույթում կան նաև հետևյալ տողերը. «Ես, դժբախտաբար, մեր գրողների մեջ չեմ գտնում մի այնպիսին, որը լեզվի տեսակետից օրինակելի լինի, բացի ընկ. Չարենցի լեզվից, և այդ պատիվը պատկանում է մեր մեծ գրող Չարենցին» (№9, էջ 514):

Ռ. Զարյանը պնդում է, որ Բակունցը նեղացած էր Չարենցից, այն պատճառով, որ վերջինս իր զեկուցման մեջ խոսում է միայն Դեմիրճյանի մասին: Բայց հազիվ թե վիրավորվածը ասեր վերոհիշյալ խոսքերը: Նորից պետք է եզրակացնենք, որ նման պնդման հիմք թերևս չկա՝ միաժամանակ չմոռանալով «ներքին խոհանոցի» մասին:

Չարենցի հոգեկան վիճակը շարունակում էր մնալ անկայուն, շատ քիչ մարդիկ կային, որ նրա տուն էլումուտ ունեին, հիմնականում փակված էր իր աշխատասենյակում: Այս ամենի անմիջական հետևանք էր 1935թ. մարտի 8-ին գրողների միության վարչությանը ուղղված նրա հայտարարությունը, որտեղ ասվում էր ԳՄ-ից դուրս գալու որոշման մասին: Չարենցի ծանր կացությունը ավելի լավ ըմբռնելու համար հատվածաբար վերընթերցենք դիմումը. «Հայտնում եմ, որ այսօրվանից ես դուրս եմ գալիս Գրողների կորպորացիայից՝ ցանկություն ունենալով իմ ընդունակությունները (եթե այդպիսիք կան) կիրառել խորհրդային արվեստի այլ ասպարեզներում՝ կինո, թատրոն, օպերետ, ռեկլամ և այլն: Եթե այս ասպարեզներում ես ես չկարողացա ապահովել իմ ապրուստի միեխմումը, մնում է մտնել որևէ գործարան, կամ զբաղվել որևէ կուստար արդյունաբերությամբ:

Խնդրում եմ դիմումս ընդունել առանց հետին մտքերի, չտալ նրան քաղաքական բովանդակություն: Ես չեմ այն հիմարը, որը կարող է բողոքել օբյեկտիվ հնարավորությունների դեմ: Ինչպես երևում է՝ փոքր ժողովրդի գրողը չի կարող ապրել միմյայն գրական աշխատանքով: Քսան և հինգ տարի գրականությամբ զբաղվելուց հետո, ահավասիկ տեսնում եմ, որ չեմ կարող ապահովել միջին կուլտուրական կենցաղ՝ ծառայելով գրականությանը: Երեք տարի է սպասվել է իմ երկերի ժողովածուն, ամեն կողմից պահանջում են այն, բայց Պետհրատը մերժում է սպագրել նոր ժողովածու՝ թղթի և հերթի բացակայությամբ: (ընդգծումները՝ Ե.Չ.) Եվ ես *ինքս* գտնում եմ, որ Պետհրատն իրավացի է: Ուրեմն ի՞նչ անել: Քսան և հինգ տարի ստեղծագործելուց հետո ապրել միայն թարգմանական կամ խմբագրական աշխատանքով: Համաձայն եմ: Բայց... ցավն այն է, որ նույնիսկ այս օրվա աշխատանքը մեզանում կարող է դիտվել իբրև բարձր բարիք, որ պետք է բաշխվի բոլոր գրողների վրա. և ամեն մեկին կարող է հասնել սահմանափակ քանակությամբ աշխատանք...

Ես նրա համար չեմ քսան հինգ տարի ծառայել արվեստին, որպեսզի նույնիսկ գրական-տեխնիկական աշխատանքով չկարողանամ ապահովել իմ և իմ ընտանիքի կուլտուրական ապրուստի միևնույնը... Ինչպես երևում է՝ պետք է հաշտվել այն բնական դրության հետ, որ փոքր ժողովրդի գրողը չի կարող ապրել գրականությամբ, մնում է, որ նա ձեռք բերի այլ մասնագիտություն և ապրի նրանով: Բոլոր հայ գրողներից (թե անցյալ, թե ներկա) ամենից քիչ ինձ կարելի է մեղադրել ստեղծագործական ծուլության մեջ, ոչ մի հայ պոետ այնքան չի գրել, որքան ես: -Հետո: -Հո՞ ես չեմ կարող օրական մի գիրք բանաստեղծություն գրել, որ ապրեն դրանով... Եթե զրեմ էլ՝ ով է տպողը և վճարողը... և ինչ կլինի այդ գրվածքների որակը...

Վերջացնելով, խնդրում եմ կրկին՝ չտալ դիմումիս քաղաքական իմաստ և այսօրվանից ջնջել իմ անունը գրողների ցուցակից: Թերևս ես կարողանամ ավելի օգտակար լինել խորհրդային կուլտուրայի այլ ասպարեզներում և, մինևույն ժամանակ ստիպված չլինեմ զբաղվել գործի և հասույթի մուրացկանությամբ» (№7, էջ 472-743):

Թերևս, մեկնաբանություններն ավելորդ են:

Փակագծերում նկատենք, որ Բակունցի վիճակն էլ նախանձելի չէր: Հայտնի է, որ նա Վ.Այգեկցու առակները փոխադրել է աշխարհաբարով՝ այդպիսով մի շնորհալի գործ կատարելով: Այդ աշխատանքը

ապրտառի միտք էր համարվում, Բայց նախկին այս դեպքում մասնաճյուղի հորդեղյին հարձակումները Բակունցի վրա:

Չարենցի դիմումը գրողների միության վարչությանը քննարկեց նրա ծննդյան օրը՝ մարտի 13-ին և հեղինակի պնդումներին հակառակ որակելով այն իբրև «քաղաքական փաստաթուղթ»՝ հետագայից նրան ԳՄ-ից Այս մասին հանգամանորեն պատմում է Էր. Նարթեկը: Նկատենք, որ վարչության նկատի ընթացքում կույր ունեցողներին միանձնակ Ստ. Ջորյանը և Գ. Դեմիրճյանն էին, որ բացառական չէին խոսել Չարենցը մտնել և առաջարկել էին թույլ տալ գրողին վերամայելու իր հայտարարությունը: Բակունցը դրական չի արտահայտվել: Հավանաբար ընչ որ տեղ ես էլ վերավարված էր Չարենցից:

Սակայն խոսվածությունը, երբեք չի վերածվել **ստեղծության** կամ բացարձակ անտարբերության: Այս ապացույցն են նույն 1935թ. Չարենցի կատարած գրառումները, որտեղ նա գրում է, թե Ալյետի հետ բարեկամությունը շարունակվում է, թեև «անշուշտ վեճի»:

Դժբախտաբար Բակունցի արիվում գրեթե ոչինչ չի պահպանվել, և հնարավոր չէ պարզել, թե ինչպիսին էր նրա վերաբերմունքը Չարենցի նկատմամբ այդ օրերին: Չմոռանալք ասել, որ հունիսի 6-ին ԳՄ վարչությունը վերականգնում է Չարենցին՝ համաձայն վերջինիս նոր դիմումի: Վերականգնման մասին որոշումը ստորագրել են Ջորյանը, Դեմիրճյանը, Բակունցը և Էր. Սիմոնյանը:

1936թ. կրակից հարաբերությունների «ձևեպր» տարի կարելի է համարել: Երկուսի սրտում էլ դեռ առկա է նեղվածությունը, սակայն հեռու չեն ներումն ու հաշտեցումը: Այս մասին վկայում է իր հուշերում Աշիեն Հարությունյանը (Տես, №2, էջ 358):

Այն փաստը, որ Բակունցն ու Չարենցը վերսկսել էին իրենց տեսակցություններն, արդեն շատ բան է ասում: Բայց, դժբախտաբար, 36-ր նաև վերջի սկիզբն էր: Հուլիսի 9-ին Լավրենտի Բերիան իր սուլիատասենյակում ատրճանակի կյակոցույթ սպանում է Ա. Խունջյանին: Ուղիղ մեկ ամիս անց՝ օգոստոսի 9-ին ձերբակալում են Ա. Բակունցին: Չարենցին դեռևս ձեռք չեն տալիս: Սակայն հետևյալ գրառումն ակներև է դարձնում նրա կացությունն այդ օրերին. «Մի թե կարող է գոնե խորհրդային գրական հասարակության համար գաղտնիք հանդիսանալ այն զարհուրելի, բառացի իմաստով անգամ քսոմոնիսի հասարակական-քաղաքական հալածանքն ու օստրակիզմը,

որի հետևանքով ավելի քան երեք տարի է, որ ես միանգամայն դուրս եմ շարտված գրական-հասարակական ասպարեզից» (№8, էջ 197):

Այդ օրերին Չարենցն արդեն վերջնականապես ներում ու հաշտվում է ընկերոջ հետ: Բակունցի ձերբակալությունից մոտ 2 ամիս հետո՝ հոկտեմբերի 14-ի զիջերը նրան նվիրված երկու բանաստեղծություն է գրում նա, որոնցից առաջինը տպագրվել է միայն վերջերս՝ 2007թ., «Վերջին խոսք» գրքում:

Նա կենդանի է դեռ մոլորակի վրա,
Քանի շնչում է դեռ իբրև անմեռ
Մի գոյություն, որ չի կորցրել դեռ
Իր կերպարանքը հին, հազարամյա
Այս ամենի համար,- և քո եղերական
Տառապանքի համար, որ դու կրում ես արդ,-
Ես ներում եմ անհա խեղճությունը քո իբրև ազգական
Դժբախտություն, երբ քո գլխին հանկարծ
Ընկնում է քար վերից...-
Ես ներում եմ անհա իմ անաղարտ
Մտերմության, սիրո առևանգումն անգամ,-
Ներում եմ վերքն անգամ անձայրածիր,
Որ քո ձեռքով դժնի դու իմ սրտում բացիր...

Սա ներումն էր, որին հաջորդում է հաշտեցումն ու օրհնանքը, նույն զիջերը Չարենցը գրում է.

...Եվ բառերի համար քա մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր ձին
Քարաքանդակ անդուռ մատուտների
Անջնջելի զրերն հնադարյան,-
Եվ մյուսոնի նման սրբազնագույն
Քո երկերի մաքուր սկիհներում պահված
Խորհուրդների համար մշտանմա,
Որպես խորհուրդը մեր նաիրական ոգու,-
Քո «Միրհավի» համար - և լուսեղեն
Արփենիկի հուշով սրբագործված հավետ
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ
Որ բուրելու է հա ր անկյութեղեն,-
Եվ վերջապես քո վեհ, հերոսական
«Սերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ

Սև ցելերի վրա մեր գոյության այս սև,
 Շաղում է շողք ու սերմ անանձնական,-
 Այս ամենի համար - և «Օիրանի» /ընդգծումը - Ե.Չ./
 Հազարամյա փողի համար քո այն,
 Որ դարերով տենչած խաղաղության
 Երգն է հնչում,- և մեր ժողովուրդը քանի
 Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո՝
 Հնչելու են երգեր եղբայրական,-
 Այս ամենի համար,- օ՛, խեղճ իմ բարեկամ
 Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...
 Այս ամենի համար,- ն քո եղերական
 Տառապանքի համար, որ արդ կրկին
 Վեհություն է խառնում քո անաղարտ երգին-
 Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական
 Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղձ
 Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,-
 Երբ դեռ դու ա յր էիր մի անարատ
 Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

Այս բանաստեղծության նման հարատև ու հավերժական է նրանց
 ընկերությունը: Այսպես է մի ընկերը ճանաչում, գնահատում և օրհնում
 մյուսին: Իսկ այդ «մյուսը» , որ կալանքի տակ էր ու գրելու հնարա-
 վորությունից զուրկ, անընդհատ հարցնում, խոսում և պատմում էր
 Չարենցից: Գուրգեն Մանուկյանը՝ Բակունցի բանտակիցը, հիշում է.
 «Բակունցը սիրում էր Չարենցին անչափելիորեն, մի տեսակ երկնային
 սիրով: Կախարդված էր նրա պոետական թափով, հոգու անսահման
 ուժով, մաքառումների ձիրքով:

-Չարենցը,- ասում էր Բակունցը,- իր պոեզիայով մի ուրազան էր
 հնի հանդեպ և կառուցման կորով նորի համար» (№11, էջ 191):

Եկավ 1937թվականը: Հուլիսի 18-ին գնդակահարում են
 Բակունցին, իսկ 9 օր անց՝ հուլիսի 27-ին Չարենցին ձերբակալում են:
 Մեղադրում են տրոցկիստական և տեռորիստական գրական խմբակի
 պարագլուխը լինելու, դաշնակցականներին օգնելու և սատարելու մեջ:
 Չարենցը մահանում է բանտային հիվանդանոցում, ձերբակալությունից
 ուղիղ 4 ամիս հետո՝ նոյեմբերի 27-ին:

Որպեսզի պարզ դառնա, թե ինչպիսի գաղջ ու տմարդի մթնոլորտ
 էր ստեղծվել Չարենցի և Բակունցի շուրջը, մենք կներկայացնենք

ժամանակի գրողներից մեկի՝ 1937թ., ապրիլի 16 ՀԳՍ ժողովում ելույթը, երբ դեռ Բակունցն էլ Չարենց էլ կեեղանի էին: Դիտավորյալ մեջբերումներ չենք անում Ն.Ջարյանի, Ա.Վշտունու կամ Հր.Քոչարի հայրենադավ ճառերից (դրանց ստոր էությունը ինքնին պարզ է): Կարդանք Չարենցի և Բակունցի ընկերներից Ս.Արմենի խոսքը, որը ստիպված չեղած «մեղքեր» է խոստովանում.

«Ինձանից, Չարենցից, Բակունցից, Մահարուց կազմված այդ խմբակը, որին հետագայում միացավ Սուրեն Հարությունյանը, իհարկե հանդիսանում էր ոչ թե լոկ գրական, այլ գրական-քաղաքական խմբակ... Չորս հոգուց բաղկացած այդ խմբակը ուներ երկու գեներալ՝ Ակսել և Չարենց: Դրանով, իհարկե, ես մագաչափ չեմ ուզում մեղմացնել իմ մասնակցությունն այդ խմբակին: Ես ակտիվ զինվոր էի: Ֆրակցիան նույնպես բաղկացած էր Ակսելից ու Չարենցից: Կուստոմսավոր այդ դաշնակցականը (Բակունցը, Ս.Ղ) կուսակցական գաղտնիքները նախ բաժանում էր Չարենցի հետ, և եթե նպատակահարմար էր, հայտնում էր նաև իրենց՝ այսպես կոչված շարքային անդամներին: Ես այս մասին ասել եմ նաև մի քանի ամիս առաջ, ասել եմ, ուր որ հարկն է...» (№8, էջ 223): Այս բովանդակությամբ համանման ելույթներ հնչում էիր զրեթե ամեն օր: Բայց պարսավողներն ու զրպարտողները մնացին անցյալում, նրանց անունները այժմ հիշվում են իբրև «ձուղա»-ի հոմանիշներ կամ Չարենցի ու Բակունցի անունների առնչությամբ՝ տողատակում, ծանոթագրություններում միայն: Մինչդեռ Չարենցի ու Բակունցի պայծառ աստղերը հավետ վառ են մնալու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1961թ. :
2. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986թ. :
3. Ռ. Ջարյան, Հուշապատում 1, Երևան, 1975թ. :
4. Ռ. Ջարյան, Մայրամուտից առաջ, Երևան, 1988թ. .
5. Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 4-րդ, Երևան, 1968թ. :
6. Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 6-րդ, Երևան, 1967թ. :
7. Եղ. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1983թ. :
8. Եղ. Չարենց, Վերջին խոսք, Երևան, 2007թ. :
9. Ալ. Բակունց, Երկեր, հատոր 4-րդ, Երևան, 1984թ. :
10. Ալ. Բակունց, Երկեր, հատոր 1-ին, Երևան, 1976թ. :
11. Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1999թ. :
12. Ռ. Իշխանյան, Բակունցի կյանքի ու արվեստը, Երևան, 1974թ. :
13. Ս. Աղաբաբյան, Ակսել Բակունց, Երևան, 1963թ. :